



ՀԱՅԲԱՐՈՒԹՅԱՆ

ՄԲ ՁԱԳՐԱԾ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 116

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.— Արսասան-
ւան տար. ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4-
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ սպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահագրներ, եւն., եւն.: Ինները անմեղքեղի կերպով աժան են:
Դեղեցկադիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՅՆԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 11 Հոկտեմբեր 1913 Թիւ 116

«Մերական Բախանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շաբաթական Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարէ, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն»:

Նամակ Կարդ. Մերի տէր Կաթի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 28 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտանամարտ:

ԴԵՊՔՆԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԷԶՄԻԱՆՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

(Շար. եւ վերջ)

Նախագոյն յօդուածներու մէջ տեսանք այն խեղճ վիճակը, յորում կը գտնուին էջմ. Եկեղեցւոյ երեք գլխաւոր բաժանումները, որոնք կաթողիկոսական մեծահնչուն անուանով պիտակաբար պատկուած են, այս է՝ էջմիածին, Աղթամար եւ Սիս:

Կր մնան սակայն զեռ երկու աթոռներ, որոնք թէեւ կաթողիկոսական չեն, բայց պատրիարքական են՝ նոյնպէս պիտակաբար: Ասոնք են Երուսաղէմ եւ Կ. Պոլիս, անկախ իրարմէ եւ անկախ միւս կաթողիկոսութիւններէ: — Պոլսոյ՝ երբեմն եւ ինչ ինչ բաներու

մէջ եւ թեթեւ կերպով էջմիածնայ Աթոռին հետ ունեցած յարաբերութիւնք, անուանական են:

Այսչափ բաժանում եւ անկախութիւն արդէն իսկ ցոյց կուտան քայքայումը, եւ ո՞վ գիտէ թէ վաղը միւս օր նոր բաժանումներ եւս վրայ չպիտի հասնին. եւ այն ատեն ո՞վ պիտի պատժէ կամ նզովէ բաժնուողները, քանի որ սոսկալի հերետիկոսներու հետ իսկ անխտրականութիւնը իրենց մէկ վարդապետութիւնն է:

Ինչ որ է, մեր այս կարի հաճառօտ տեսութիւնը լրացնելու համար, կարճ ի կարճոյ խօսինք նաեւ այս երկու պատրիարքութիւններու վիճակին վրայ եւս:

Ա. Երուսաղէմի էջմիածնական պատրիարքութիւնն ո՞վ որ կ'անուանէ, կ'անուանէ անորակելի եւ անվերջանալի խառնակութիւն: Նիւթական ընդարձակութենէ, կեն-

սական կորովէ, ներքին կազմակերպութիւնէ, նուիրապետական նշանակութիւնէ զուրկ եղող այդ անուանական պատրիարքութիւնը՝ կապուած է վանքի մը բախտին հետ։ Միաբանութիւն մըն է այդ պատրիարքութիւնը, յոխորտալից անուանով, ինչպէս սովոր են սիրել Հայք։ Իր պատրիարքը Երուսաղէմի միաբանութեան արքայապետն է։ Իսկ այդ միաբանութիւնը իր կենսունակութիւնը կը պարտի ամի ամի Երուսաղէմ՝ յաճախող հայ ուխտաւորներուն, որոնք՝ բարեհաւատ և երկիւղած, առատ նուէրներ կու տան այդ վանքին։ Իսկ այդ վանքին վիճակը... Մենք չպիտի վկայենք հոս ալ, որպէս զի կասկածելի չհամարուինք. դարձեալ էջմիածնականներու վկայութեան համաձայն՝ այդ վանքը «Աւագակներու ուրջ մըն է»։ մէն մի վանական՝ մէն մի ինքնագլուխ, որոնք անխղճօրէն կ'ուտեն, կը վատեն, կ'իւրաքանչեւ սըրբազան դրամը. և ահա ասոր համար վանքը ոչ թէ տարիներէ, այլ դարերէ ի վեր պարտքերու ահագին գումարներու բեռներուն տակ կը հեծէ... Այս վիճակը, ինչպէս իրենք կը վկայեն, ազգին մեծ վնաս և անուանարկութիւն ըլլալէ զատ, նաեւ կը ստեղծէ աղտոտ և անբարոյական միջնորդութիւն մը վանքին մէջ... Եւ պատրիարքը բնաւ ազգեցութիւն չունի, նշանակութիւն չունի. կը հետեն իրեն, կ'անարգեն զինքը, կը ծաղրեն, մինչեւ իսկ... կը բանտեն։ Կ'անսաստեն Պոլսոյ կեդրոնական վարչութեան, որ արգէն աշխարհականացած է, կ'անսաստեն ամէն բանի որ Եւրոպայէն է։ Եւ հիմա այս պատրիարքութեան, այս վանքին, այս Միաբաններուն՝ ըստ աւետարանի և ըստ Եկեղեցւոյ ոգւոյն, ստիպիչ կտրգ. կանոն զնեղու համար Պոլսոյ աշխարհական ժողովը, յորում հիմա կը տիրէ Դաշնակցականութիւնը, կանոնադիր մը կը պարտաստէ, և զայն պիտի պարտադրէ՝ ի հեճուկս արքեպիսկոպոսոս, վարդապետաց, քահանայից և կրօնական ըսուած ժողովոյ... ա՛յս է ահա Երուսաղէմի պատրիարքութիւնը։

Կրցաք կարծեմ մակարերել, այս վերջին դէպքէն, նաեւ Պոլսոյ պատրիարքութեան

վիճակը։ Բացարձակապէս ստրկացած աշխարհականներու, և հիմա՝ Դաշնակցութեան լուծին տակ։

Բ. Պոլսոյ պատրիարքը, այսինքն Բաքրիքը, Սուլթան Մէհմէտ Թաթիհին հաստատութիւնն է. անկէ առած է իր իշխանութիւնը, իր Investitureը։ Թուրքիոյ էջմիածնականներուն վրայ կը տարածուի իր իրաւասութիւնը։ Միահեծան Ինքնակալութեան ժամանակ ահագին շահատակութիւններ գործած են այդ պատրիարքները. հռչակ հանած են մանաւանդ հայ Կաթողիկէները դարերով և չարաչար հալածելով, իրենց իշխանութիւնը ահաւոր եղած է նաեւ իրենց հօտին վրայ։ Ազգային սահմանադրութիւնը սակայն եկաւ կաշկանդեց իրենց քնահաճոյքը, անկողար շահատակութիւններ։ Անկէ ասդին ստրկացան խղճալի եղանակաւ։ Հիմա պատրիարքը նշանակութիւն չունի, զուրկ՝ եկեղեցական կորովէ, նուիրապետական վեհութենէ. պարզապէս ապիկար մըն է, խամաճիկ մըն է. սոսկ պիտակ անուն մըն է, գործիք մըն է. ինքա մեմուրը է, ինչպէս իրենք կ'ըսեն. այսինքն՝ աշխարհական ժողովը կու տայ վճիռը, և պատրիարքը պարտական է գործադրել այդ վճիռը, ինչ որ ալ ըլլայ ան։ Վճիռ տուողը, բնականապէս, գերիշխան է, և գործադրողը՝ ստորակարգ. ա՛յս է ահա համեմատութիւնը՝ աշխարհականաց ու պատրիարքի միջեւ. ստորակարգեալի մը՝ առ իւր իշխանն ու հրամանատարը։ Այս է անկումը յորում կը գտնուի Պոլսոյ էջմիածնական պատրիարքը, զոր՝ իրեւ խաղալիկ, կը դնեն կը վերցնեն, կը բարձրացնեն կ'իջեցնեն, կը գովեն կը դստովեն կամ կը ծանակեն աշխարհականաց խումբ մը. պատրիարքը ստրուկ է, բառին կատարեալ նշանակութեամբ։ Հերձուածող եկեղեցւոյ մը մէջ անկախաբար շահատակող հոգեւոր պետեր, անողոք տրամաբանութեամբ իրաց և դիպաց՝ ստրուկ դարձած են իրենց հօտին. ա՛յսպէս ուզեցին, քանզի ա՛յսպէս քարոզեցին, ա՛յսպէս սորվեցուցին՝ հակառակելու համար Հոռոմայ Ս. Եկեղեցւոյն աստուածադիր սկզբունքներ։

րուն. Ահարոնի պէս՝ ոսկեղէն հորթը չինեցին, ընդդէմ կամաց Մովսէսի, որ՝ Սինայ լեռան վրայ միակ խօսակիցն է Աստուծոյ։ Եւ անզոյները, ազգասիրութիւն կարծելով կործանարար կեղծիքն ու եսասիրութիւնը, կ'ուզէին կը մաքառէին մեր մէջ, կաթողիկէիցս մէջ ալ մտցնել այս մահաբեր մեթոքը. աշխարհական տարրը տիրայնել, եկեղեցականութիւնը ստրկացնել, ուզածնուն պէս վերցնել դնել եպիսկոպոս, կաթողիկոս։ Տեսէք զեռ վերջերս ի՞նչ կը գրուէր Մեմուլայի մէջ. «Ի՞նչ յանցանք ունի ժողովուրդը. այսօր իմ քուէներովս կ'ընտրեմ, վաղը իմ քուէներովս կը տապալեմ, եթէ ստրկողական հարկը պահանջէ. այդ չէ՞ մեր իրաւունքը» (թիւ 5026)։ Եւ այս անճոռնի վարդապետողը՝ կը յանդգնի մեր կղերին ուղղել սա խօսքերը՝ նշան իր ամենախոր տգիտութեան և ժպրհութեան. «Եղե՛ք ժողովուրդին հետ, եղած կ'ըլլաք Աստուծոյ հետ»։ Ո՛հ սողացող սերունդ, որ քայքայման դործին մէջ կուրօւէն կ'ուզէ ազգասէ՛ր ըլլալ, կործանել եկեղեցի և ազգ միանգամայն... ասոնք կը վարդապետեն մեզի ազգասիրութիւն, ասոնք պաշտպան են եղեր հայ կաթողիկէ իրաւունքներու. ծիծաղելի, գարշելի, ողբալի։ Էջմիածնականներն, մանաւանդ անկրօն Դաշնակցականք, նորօրինակ հռչակածով մը, գայթեկեցիքին մերիններն ալ, տկարները, և ճգնեցան այս քայքայումի սկզբունքը մեր մէջ ալ ցանել։ — Միայն թէ չգիտցան որ առիժը՝ սողուններէն, արծիւը՝ ճանճերէն չի վախնար։ Կաթողիկէ եկեղեցւոյն նաւավարը ինքն Քրիստոս է, յանձին իւր Փոխանորդին՝ Հոռոմայ Քահանայապետին։ Կաթողիկէ եկեղեցիին ժայռ է՝ մրկաց վանիչ, ալեաց խորտակիչ, անսասան ցվերջ ժամանակաց։ Նաբօլէոններ փշրուեցան։ Կաթողիկէ եկեղեցին կը հաւածուի — նշա՛ն իր ճշմարտութեան — բայց չի մեռնիր. իր նաւը կ'ալեկոծուի, բայց չի սուղուիր։

Այդ չարաբախտութիւնը՝ քայքայումի և սուղման, վերապահուած է էջմիածնական անջատ, հերձուածող, հիւժախտաւոր և աշ-

խարհականացած եկեղեցւոյն, ինչպէս սորվեցուցին անոնք որ իրեն համար Փրկիչի գործին սահմանուած էին։ Սորվեցուցին անկախ, ժողովրդավարական, ռամկավարական եկեղեցի. և պատժուեցան և մասն ընդ ընդ ծառայութեան. «Նոցա ազնուքիւն խոսանան, եւ ինքեանք ապականութեան ծառայէն. զի որով իւրի յաղթիցի ոք, նորին եւ ծառայ է» (Բ. Պետր. Բ. 19.)։ Այսպիսով կրնայ հասկցուիլ թէ ի՞նչ իշխանութիւն կրնայ ունենալ ի՞նչ կրօնական ըսուած ժողովն ալ՝ որ, ենթադրելով հանդերձ որ աստուածաբան և բարեպաշտօն եկեղեցականներէ կազմուած ըլլայ, — որ ձրի ենթադրութիւն մըն է, — այսուհանդերձ պիտի չկարենայ բնաւ պաշտպանել եկեղեցւոյ իրաւունքները։ Ի՞նչ կ'ըսենք. անիկայ նոյն իսկ կ'ոտնակոխէ եկեղեցւոյ և Աւետարանի սկզբունքները. անուր ամուսնալուծումներ կը վճռէ, առանց խղճի խայթի մը. հաւատոյ մասանց դէմ քարոզողները անպատիժ կը թողու. կրօնքի պաշտպանութեան, ժողովուրդներու քրիստոնէական դաստիարակութեան համար բնաւ կորովի, ազդեցիկ և վճռատու քայլ մը չ'առնուր. նիւթական, միքենական բան մը վերջապէս, ցոյց մը, անուն մը։

Այսօր ի՞նչ վիճակի մէջ է նոր սերունդը, որպիսի՝ ապականութեանց մատնուած է, ինչ անաւոր ապագայի մը առջեւ կը զբտնուի... ո՛վ պիտի մտածէ. հոգեւոր իշխանութիւն. ուժասպառ այս սորուկին յետին մտածումներէն մըն է այդ. ի՞ զուր է որ միքանի իմաստուններ մերթ ընդ մերթ կը հընչեցնեն մահազանգը, ինչպէս մէկն անցեալ օր գրած էր հետեւեալ լացող տողերը.

«Այսօր, օրուան նորութիւնը եղող կարգ մը առատոց, անհեթեթ, հակաբնական, վնասակար եւ պիղծ վարդապետութիւններ մուտ գտած են մեր Ազգին մէջ. կարգ մը մարդեր, օրուան մտային հետեւած ըլլալու համար պարզապէս, առանց հասկնալու իրապէս կ'ընդգրկեն այդ մոլոր վարդապետութիւնները, եւ կը ջանան զանոնք տարածելու ազգին մէջ, այսպէսով ազգին անկումը, կոր-

ծանուծը կը պատրաստեն : Մանուսանդ մեր ուսանողները, որոնք վաղը գաւառները երթալով, կոչուած են բաւական կարեւոր դեր մը խաղալու հայութեան ճակատագրին վերայ, ընդհանուր հոսանքէն քշուելով, ամէնքն ալ, հաղուագիւտ բացառութիւնով մը, կ'ուրանան կրօնի և հայրենիքի նուիրական գաղափարը, և ասիկա մեծ պարծանքով մը կը յայտարարեն յաճախ :

«Եւ երբ լուրջ մէկը գտնուի, որ յորպոյէ այդ ազգավեաւ վարդապետութիւնները ընդգրկողները, զգաւորութեան, իրր նախաափնք՝ յետադիմական, կղերամիտ, ազգայնամոլ, նախապաշարեալ, ծխած, բէաքսիօնէր, և այլ փակզիրներով կ'որակեն զայն, իբր թէ անձի մը իր ազգային աւանդութեանց, լեզուին, կրօնքին պահպանման կուսակից ըլլալը գէշ բաներ են, մինչդեռ ազատական, ընկերվարական, անկրօն, անհաւատ ըլլալը՝ լաւ բաներ :

«Կը հարցնեմ. ի՞նչ պիտի ըլլայ վախճանն իրերու այս տխուր կացութեան : Երբ գաւառէն բազմաթիւ աշակերտներ հետզհետէ Պոլսոյ վարժարանները կը դիմեն և միեւնոյն հալոցին մէջ թափուածի պէս, գրեթէ առանց բացառութեան ընկերվարական կ'ըլլան» (Հեռաձայն) :

Նոյն իսկ Բիւզանդիոնի մէջ Բէչեան-որդի այս տեսակ ողբանուագներ ունի. զ. օ. «Կը թողունք որ՝ կ'ըսէ, մեր մէջ գայթակղութիւն յառաջ բերողները... իշխանութիւն և կարգ կանոն չճանչցողները, սանձարձակ ուղածներն ընեն, և կարծես անկէ հաճոյք կը զգանք» (Բիւզանդիոն, Թիւ 5233) : Ի՞նչ խոստովանութիւն, բերնին մէջ անոր որ Սոյ կաթողիկոսին հակաքրիստոսական աւարբը այնքան կը դրուատէ : Այս սերունդը փիլիսոփայութեան պակասութենէն է որ՝ հոգեւորապէս հիւժամաշ, կը նքթի, կը սպառի :

Արտերնիս կծկելով և մերթշուառ ազգին տխուր վիճակին վրայ աւաղելով է որ պատուիրացոյցինք այդ արտմաթախիծ տեսարանը՝ էջմիածնական եկեղեցիին, որ՝ իր հերձուածական դրութեան մէջ, անխուսափելիօրէն, պիտի քայքայի վերջնաւար, ճակա-

տագրական անողորմելիութեամբ : «Սիրեցին զիսւար առաւել քան զյոյս» : Անկուծի և մոլորութեան մէջ յամառաբար շարունակելը՝ սատանայական է : Բարիքի և բարոյական նացման սկզբնաւորութիւնը ճշմարտութիւնն է, ինչպէս խաւարի փարատումին պայմանը լոյսն է : Իսկ անոնք որ պարտք ու պաշտօն պիտի ունենային այդ խեղճ հասարակութիւնը լուսաւորելու և ուղիղ ճամբայ առաջնորդելու, անոնք ոգի ի բռին կ'աշխատին — անձնական շահերու համար, — ո՛չ միայն պահել զայն իր մոլորութեան մէջ, այլեւ աւելի մոլորեցնել : հովիւներ՝ որ գայլ ձղած են : Անոնք են որ օտարոտի վարդապետութիւններ կը մուծեն օր ըստ օրէ, ու կ'ապականեն հաւատոյ անեղծութիւնը. անոնք են որ կ'աղինն առած՝ էջմ. եկեղեցի ըսուածին արմատին կը զարնեն. բանով ու բրիչով անոր հիմերը կը քրքրեն կը քայքայեն, հիմերը՝ որ արդէն մոլորութեան և հերձուածի աւաղին վրայ դրուած են : «Իջին անձրեւէ՛ յարեան գեթ, շնչեցին հողմ» հաւորին զտունն, եւ անկաւ. եւ եր կործանուան նորա մեծ յոյժ» (Մատթ. 5.) :

Բայց կործանումն ու քանդումն այդ աղիտարեր գործողութեան մէջ կայ մէկը որ ամէնէն ողբերգական դերը կը կատարէ. իբրեւ թէ՛ Երկնի պատուհանն ըլլար այդ մոլորեալ հասարակութեան համար : Կարծես անաբեկիչ գիշերային տեսիլք մըն է, որ շուրջը կը սփռէ մահ և աւեր : Այդ մարդը որ Աստուծոյ օժտուած է տաղանդով, անած ու դատարարակուած է ճշմարտութեան ծոցին մէջ, յետոյ, առ փառասիրութեան, ուրացաւ զայն. և ըստ սովորութեան անոնց՝ որոնք իրենց ուրացած Աստուծոյ կը ճգնին ամբարշտօրէն ոչնչացնել, քինու զօրութեամբ յարձակեցաւ. ճշմարտութեան միակ Գանձարանին՝ Հոռոմայ Ս. Աթոռոյն դէմ. և կարծելով թէ իր սրբապղծ ջանքերը պիտի կարենան ստնսնել անոր, որուն զարնուելով զօրնոց ոյժերն անգամ կը փշրուին, սկըսաւ անոր դէմ վարդապետել. Յարձակած էր հովը՝ ժայռին դէմ, հիւլէն՝ արեգական դէմ, փանաղի գաճաճ մը՝ երկնքի դէմ : Ան-

թափանցելի են սակայն Աստուծոյ գաղտնիքները։ Աշխարհային վրիժու և փառաց համար էջմիածնական եկեղեցիին մէջ ապաստանող՝ կաթողիկէ հաւատքէն ուրացեալն Օրմանեան, իր այս հակահոլովմէական խօսմաքառումին մէջ՝ մինչ կը կարծուէր թէ կը շինէ, կը կերպարանաւորէ, կը ձեւակերպէ էջմիածնական եկեղեցին, նա կը քանդէր զայն ահեղօրէն. «Եթէ ոչ Տէր շինէ զՍուրբ, ի նախ լուսնակին շինողք նորա» (Սղմ. Ճիզ, 1.)։ Այն հարուածները որ իջեցնել կը կարծէր կաթողիկէութեան դէմ, ահապէս հակահարուածներ կ'ըլլային քանդելու էջմիածնական եկեղեցին՝ հարուածեալ եգիպտոս։ Նման։ Կարծեցին անոնք — էջմիածնականները — թէ գտնւած մը գտած են այս մարդով. մահապիւռ զանգուած մըն էր։ Վարդապետեց յէջմիածին և թունաւորեց, վարդապետեց յիւրմաշ և անկրօններ հապուց. քարոզեց ու վարդապետեց և գայթակղեցուց։ Ապա գրեց։ Դրիչը ահարկու գործիք մըն է. կեանք կու տայ, կու տայ և մահ։ Կը սփռէ չնորհ, կը ժայթքէ և ժահր. կը փոխուի եղեմածին գափնիի, կը փոխուի նաեւ ժանտաժուտ իժի կամ զժոխամուխ դաշոյնի։ Դրեց Օրմանեան և կը սպաննէ էջմիածնական եկեղեցին և հասարակութիւնը։

Եռագլուխ վիշապի նման, երեք հատորներով մահը սուլեց Օրմանեան։ Օձի լեզուի նման շողացող գրիչին լեզուովը նախ առաջ ուզեց խոցոտել Աւետարանը — անխոցելի Բանը. — գրեց Համապատմութիւնը։ Ապա ուզեց այդ ապիկար և ոպանիչ գրչովը կանգնել անկախ աշխարհական եկեղեցի, այդ խառնուրդած հինցած էջմիածնական եկեղեցին, և հիմնադրուող քանդեց զայն. գրեց Հայոց եկեղեցին։ Միշտ նոյն կործանարար խանգով յարձակեցաւ իր գրիչովը նաեւ ազգին վրայ, վիրաւորեց սպաննեց նաեւ անոր հիւնաքար դէմքերը — գրեց Ազգապատմութիւնը։

Ահա ինչ գործեց այս պատնիս պատ և ծաղրածու Անպարտը, ինչպէս անուանեցին զինքը, այդ հոգեւոր սպանիչը, այդ հայրենադաւ Կորիւնանոսը։

Պատմութեան մէջ եղբերորդական նմանութիւն մը կայ իրեն, որ արիւնիս կը ստոցնէ։

Օրմանեան ըսողը՝ կրնայ չյիշել Օրպանը։ Օրպան՝ քրիստոնեայ մըն էր, քաջ քրիստոնեայ, առաջնակարգ ձուլիչ թնդանօթներու...

Ելաւ Օրմանեան ահարկու Ինքնակալին առջեւ, և ըսաւ. «Ե՛ս պիտի քանդեմ Կ. Պոլսոյ պարիսպները»։

Սարսուռ մը վազեց երիտասարդ Ինքնակալին գլխէն մինչեւ ոտքը։

Այդ զարհուրելի Սուլթանը՝ ամուլ հնարքներ խորհելով երազանքի մատնուած, գիշեր ցերեկ կ'այրէր Պոլիսը գրաւելու մղձաւանջովը. բայց աննկուն, յուսահատեցուցիչ էին Պոլսոյ պարիսպները։ Եթէ իր մեծ նախահաւը՝ Կայծակն Պայազիտ, ճնշուած չըլլար Թիմուրի կաղ ոտքին ներքեւ, արդէն Օրմանեան գոհարապսակ Պայազաուին Դահոյքը՝ Բնութեան հրաշալիք և քաղաքացի Թադուհին եղող Պոլսոյ բարձանցը վրայ հաստատուած պիտի ըլլար, ընդմէջ ոսկեալեակն Մարմարայի — Ոսկեղջիւրի — Վոսիտորնի և մրկաբերն Պոնտոսի. և ինքը պիտի ըլլար... աշխարհի տէր!... Բայց աւա՛ղ, այդ հեգնող, աննուաճ, անվկանդ, անառիկ, այդ անիծեալ պարիսպները... հիմա կը զարհուրեցնէին կ'ընկրկէին զինքն ալ։

Հանճարաշատն, անգոպելին և անյող-դողին Յաթիհ Մէհմէտ, Սուլթաններուն ամենէն մեծն ու քաղաքագետը. — եթէ ի բաց առնուի Օրէնդիւրն և Մեծափառն Սիւլէյման, — տեսնելով Օրպանը իր առջեւ կանգնած որ կը կրկնէր, «Ե՛ս պիտի քանդեմ Պոլսոյ պարիսպները», — խօսական անուշիւ մը զարթնողի նման ահարկելի նայուածք մը նետեց ու առիւծաբար գոռաց այդ ժպիւրիկն։

— «Կա՛մ խօսքդ կա՛մ զլուխդ»։

— «Ոոս՛քս» կրկնեց Օրպան անդրդուելի։

Եւ Օրպան ձուլեց աշխարհաշուշակ Ահալիւնը, աննման հսկայ թողանօթը, նիւաճ-նիւաճ, !!! տիեզերադիտակը, քրիստոնեայ մայրաքաղաքը կործանելու համար։

Ու արքայից Արքային ամենի նժոյգը
ի դոփ ի տրոփ զարթեալ ի գոռ՝ այդ նոր
Աղեքսանդրին ներքեւը։

Եւ անաւոր բանակ մը քաղեց Փաթիհ
Սուլթան Մէհմէտի ետեւէն։

Պոլսոյ պարիսպներու դէմը կանգնեցաւ
դժոխային գործիքը, ճիհանցիւմա, և լափ
բացաւ իր մահաշունչ բոցոտիայլ կոկորդը։

Օրերով տեղաց հարուածներ, ռումբեր,
չանթեր, և տոկացին պարիսպներն ան-
սասան։

Եւ անաւոր Ինքնակալին զայրոյթը փո-
թորկեցաւ ծովերու պէս, և որոտաց սեւ
ամպերու պէս...

Պիտի իջնէր կայծակն Օրպանի վրայ։

Եւ անա քրիստոնեայ քաջի մը՝ աշխար-
հանդակ Հունիատիի, Բրիստոնեայ զեսպանը
միջամտեց։

Ըսաւ. «Եռանկիւն հարուած... ա՛յն է
կործանարարը»։

Յուսահատութեամբ վայրանկեալ գլուխը
վիշապանման ցցուեց Օրպան։ Երեք հար-
ւածներն թնդացին՝ երեք այլեւայլ կէտերու
վրայ՝ եռանկիւնօրէն, եռագլուխ վիշապի
նման. և քայքայեցաւ պարիսպը...

Ուրախութեամբ յիմարացած՝ ցատկեց
Օրպան իր մահու գործիքին վրայ, և համ-
բուրեց զայն։

Եւ մինչդեռ կը մեծնար հոգեւոր Բա-
ղաքին մահացու վէրքը՝ Օրպանեան խրա-
մաւոր, և փրփրերախ նժոյգին վրայ սպա-
ռազէն կը շողար Փաթիհ՝ փայլատակեցնելով
իր պողովատիկը, և կարուկ հրամաններով
կը դըրդեցնէր բանակը, և նահատակք ահե-
ղագոյ աղաղակներով բոցաշունչ կը դիմէին
վերջին յարձակումի, և կը հնչէր վայրկեանը
արիւննուշտ իրարանցումին, Էտիրնէ-Գա-
բուր խողխողումին ու թագազարդ ծիրանե-
փառ Կոստանդինու փառաւոր մահուան և
հերետիկոս ու թուլամորթ Պոլսոյ անկումին
և Իմաստութեան սաճարին գերութեան ու
Մահիկի ծածանումին, և խարխուլ դարերու
վախճանումին ու նորերու վերազարթնու-
մին... ահա Օրպան գգուեց դարձեալ իր
սիրելի, վիթխարի և ամենի հոկայն՝ ձիհան-

ցիւման, իր դժոխային մահապիլա գործի-
քը... վերջին ռումբ մըն ալ՝ Ուղղափա-
ռութիւնը ատող և հեպնաբար Օրթոսոֆ
ըսող Քաղաքամօր սա թափթփուող պա-
րիսպներուն...

Օրպան տուաւ կրակը...

Ահագնադղորդ որոտում մը սարսեցույ
երկինքն ու հրկիրը...

Երբ մուխը փարատեցաւ, թնդանթին տե-
ղը աւերակի կոյտ մը միայն տեսանելի էր...

ձիհանցիւմա պայթած էր, և Օրպան
անոր բեկորներուն հետ կտոր կտոր եղած և
դէպի ամպերը նետուած... և հիմա անոր
մարմնոյն բզկտուած արիւնաթոր մասերն
աստ անդ գետին կ'իջնային...

Գործիքը զինքն սպաննեց։

Ինչ ահեղ դաս ես... չիջելափաւ ո՛վ
Օրպան։

Վ Ե Ր Ջ

ԼՈՒՐՏ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻՆ ԵՔՆԻ ՄԻԻՃԻԶԱԹԼԱՐԸ

Մասամբ Բօզալի Լարիվէն, Բարիզ խա-
թախանէլէրինին տախիլի սօգթօրլարընտան
Տօքթ. Կրանմէզդոնըն վէրմիշ օլտուղը բարօր
միւլէիպինճէ, եէտի սէնէտէն պէրի պիր րահմ
իլլէթինէ թուլթուլմուշաը։ Օն իւշ էվլաւ
վալիտէսի օլան պու գատընճըղազ պիր ա-
րանտիսիթ ամէլիաթընա տա թապի օլմուշ
օլտուղընտան, օ տէրէճէ զարֆ պիր հալէ
կէլմիշտի քի՝ միւլէիզաթըն արէֆէսինտէ,
չարշաֆըն պիլէ իւզէրինտէ պուլընտըրա-
ճազ գուվվէթտէն տէ մահրում իտի։ Ս.
Հաղորդութիւնըն իքինճի տէֆա էճնիւնտէն
կէշտիյի սըրատա քէնտի քէնտինի չիֆաեապ
օլմուշ պուլտու։ Շէօյլէ քի պիր կիւն էվլէլ
չարշաֆըն աղըրլըղընա թէհամմիւլ իտէմէյէն
գարնընըն իւզէրինէ պու կիւն չիտտէթլիճէ
վուրապիլիյօր վէ հիշ պիր աղըր էտէրի տույ-
մայօր։ Քէնտինի մուայէնէ իտէն սօգթօրլար
քեամիլէն սաղալմըշ օլտուղունա դարար
վէրմիշտիլէր։

Մասամազէլ Բլէր Բաքինեօն, Բարիզ սօգ-
թօրլարընտան Բիէր Լըսաթըն վէրմիշ օլտուղը

բարձրա նազարէն, վերէմլի բերթօնիթ իւլէ-
թինէ միւսկթէլա խոր: Պիրատէր վէ հէմի-
րէսի տէ վերէմտէն վէֆաթ իթմիշ իտիլէր:
Ուզուն միւստէթտէն պերի ալաղա գալգ-
մամագտա օլան պու գըզ՝ Ս. Հաղորդու-
թիւնն թէգարրիւպինտէ, շիտտէթի պիր
սարսընթը տուլտուղընը վէ պատէհու ֆէվգ
էլաւէ պիր բահաթըզ հիսս իթտիլինի,
քէնտիսի շիֆա պւլուշ տըր եօլունաս
ֆիքրինաէ աօղան մէսէրրէթէ ինանամաու-
ղընը վէ ալաղա գալգմաղա թէրէտտիւտ իթ-
տիլինի, նիհայէթ Մատամ Կօթինին գըլամ
էլէտիլինի կէօրէրէք, քէնտիսինն տէ գը-
լամ էլէտիլինի նազլ իթմէքտէ տիր: «Մատ-
մազէլ, հապիգաթէն բահաթմընըզ» տէյէ
սիւալ իտէն աօգիօրա, «էֆէնտի, սիվին
գատար բահաթ օլտուղումա էմին օլունըզ»,
ճէվապընը վէրմիշ տիր: Թապիպէր պու
միւճիգաթա տահա զիյատէ գանի օլմագ ի-
չիւն Մատամ Բլէրի տահա պիր գաշ կիւն
մուայէնէտէ տէվամ իտէճէքլէր տիր:

Օգոստոս ճոտ շիֆարէզիյր օլմուշ օլան
Մատամ Տիւքրօ հազգընտա, Վիշիտէ օնը թէ-
տավի էլէմիշ օլան Տօգթ. Շէ շու սուրէթլէ
բարօր վէրմիշ տիր. «Տէօրք սէնէսէն իթիպա-
րէն պու կիւնէ գասար Մասամ Տիւքրօյր քե-
սավի էյիմիթ օլտուղումա շէհասէք իսէրիմ:
Մեզպուրէ խասքէ, լալէք սէրի սուրէքսէ ի-
թիլմէսէն պուլընան bacillöse pulmonaire
իլլէթինէ միւսթիւ սր. միստիսէն եարասը
օլմագլա պերապէր պաղըրսագլարընսա սա-
խի պօղուզըրգ վար սր. շէօյի քի միսէնին
եարասընըն վիսիմ պիր հալ իթիսապ իսէ-
պիլմէսի սէ ինթիմալ պաիսիսէն սէյիլ սիւ:

Պուսան մասա մեզպուրէ իրինլի միւլէրէրէ
մէքրօսալըինմիթէ սէ միւսթիւ օլուպ, ա-
զալը սիւֆլասընսա շիւ վէ ալաղընըն աւ-
գա բարաֆընսա սա հարալար մէվնուս սր:
Պու խասքէնին ղալէք պէօյիւֆ պիր քէն-
իթէսէ օլտուղընը իլավի էքմէյէ հանէք պիլի
եօգ սր:

Իշթէ մէյթի միւլթէհարրիք հալինտէ կէ-
թիլինէն պու խասթէ պիր քէրրէ հազգաւա
կըզանաղգտան, մազարայա զիյարէթ իթտի-
րիլտիքտէն սօնրա խայլը էսէրի սալահ կէօս-

թէր-իշ իսէ տէ, Ս. Հաղորդութիւն թափօ-
րընտա պիւսպիւթիւն էյի օլմուշ վէ շիֆա
պուլմըշ տըր:

Միւճիգաթը վագապարը մուայէնէ խու-
սուսընտաքի սըգըլըղը տարպը մէսէլ հիւք-
միւնիւ ալմըշ օլան տօգթ. Պուսասարի, պու
միւճիգաթ գարշըսընտա մէպիւթ գալմըշ
տըր: Միւճիգաթընը մուայէնէ իթմէք իւզըրէ
էճնէպի թապիպէր տէ տավէթ օլունմուշ-
տըրլար: Պօնի, Սէսթըրն վէ Բիպիէ նամ
տօգթօլար ղիւտագգըզանէ պիր մուայէնէ-
տէն սօնրա մատամ Տիւքրօնըն քիւմիլէն
տիւզէլմիշ օլտուղումա թաստիգ իթմիշտիր-
լէր:

Մուայէնէ տայիթէսինտէ պունլարըն ա-
թըպպա թարաֆընտան բէյ տէր բէյ թէֆթիշ
օլունտուղարը սըրասա եէնի եէնի միւճի-
գաթլար տա կէօրիւմէյէ պաշլարլար: Փա-
գաթ Լուրտա շիֆա պուլմընլար աթըպպա
թարաֆընտան էյիճէ մուայէնէ օլունմատըզ-
ճա միւճիգաթ սըրասընտա տախիլ օլաֆա-
մագտա տըրլար. մէսէլա տօգթօր կէստոնըն
իւշ սէնէ թահթը թէտավիսինտէ պուլընըպ
տա քէմիլէրինտէ պիր ամէլիաթ իճրա ի-
սիլաշքտէն սօնրա իշինէ տէվամ իթմէյէ
միւզթէտիր օլան Մօն-Սուլէ-Բօթլը 18 եա-
շընտաքի ժօզէֆ Պօտիէ ախիլէն. թէքրար
էսիլ քէմիք խասթէլիլինէ տիւշար օլմուշ
վէ տիշլէրի թուլթուլմուշ. հալ պու քի պու
տէֆա Լուրտա կէլմէք իւզըրէ Բուաթիլէյէ
վասըլ օլտուղումա, իւզէրինտէ ասարը ոս-
լահ կէօրիւլմիւշ իսէ տէ, էվլէլէճէ ամէլիաթ
իլէ սաղսլմիշ օլտուղընըն իշուն, պու տէֆա քի
շիֆալը միւճիգաթ հալինտէ գապուլ օլուն
մամըշտըր:

Էրնըքուրը 23 եաշընտա քի թիւրէլ,
տօգթ. Կէրէնին բարորընա նազարէն, միւզ-
միւն Պրօնշիթ ալալիմի կէօթէրէն վէրէմէ կի-
րիֆթար օլուպ գատիտ հալինէ կէլմիշ վէ
գուվվէթտէն պիւսպիւթիւն տիւշմիշ օլտու-
ղը վէ պունլարըն իւզէրինտէ պիրտէ գաթ
իւլ ճէսպ խասթէլիլի կէլիպ խասթտիտան. յէ
գօնուլմուշ օլտուղընըն հալտէ ինսանի շարէլէր-
տէն գաթիէն իւմիւսիլի քէսմիշ օլան պու
զէվալը Լուրտա կէլմիշ տէօրթ քէրրէ հա-

վրդտա երգանմը վէ տէօրտիւնճիւ ինթիմա-
մընտան սօնրա , իւզէրինտէ սալահ կէօրիւ-
միւշ վէ կիւզէլճէ թաամ իսէպիւմիւ տիր :
Տօգթօրլար էյի պիր մուայէնէտէն սօնրա ,
արթըզ հիշ պիր էսէրի մարազ պուլամասըզ-
լարնա րաբօր վէրմիշտիրլէր :

14 եաշնտաքի իվօն Ժէրար , Շարթըր
զիյարէթճիւլէրի իլէ պէրապէր Լուրտա կէլիր
վէ «պէն գիրտէ իմզա սահիպի Շարթրտա
իյֆայը վազիֆէ իսէն սօգթօր , իվօն Ժէրա-
րն , արագսընտա բօթ խասթէլիյի մէվճուտ
օլտուղունը վէ պէլ քէմիքլէրինտէ պէօյիւք
պիր ինիվաճ պուլուտորղընը թաստիգ իտէ-
րիմ : Մէզպուրէ տահա շիմտիյի գատար հիշ
պիր ճէրրահի ամէլեաթա թապի օլմամըշտըր
Շարթր , 25 Յունիս , 1913 , Տօգթօր Փայօշ
րարօրընը համիլ պուլընտն վէ օ թարիխտէն
սօնրա պէյհու տէ եէրէ խասթախանէլէրի սօ-
լաշան վէ կիթաիքճէ քէյֆսիպլիյի տահազի-
յատէ ալըրլաշան պուլ զըզճըղազ , շիմոի ,
Լուրտա Աօտուլաճաճիւնի միւճիկաթըլլա քեա-
միլէն իֆապաթ պուլմուշ օլուպ , սաղլամ
պիր քիմսէ կիպի հէր պիր հարաքէթի եա-
րապիլմէքտէ տիր : Վէ պուլնըն պէօյլէ օլ-
տուլընը սօգթօր . Շարթօյ տախի թաստիգ էյ-
լէմիշ տիր :

Մէնէլէրտէն պիրի կէօքսիւնտէ գաւնսէր
հուսուլա կէլմիշ օլան Օրանժըլ մատամ պիւ-
թալօ Լուրտա կէլմիշ վէ միւճիկաթըլ սու-
իլէ կէօքսիւնիւ պիր գաշ քէրրէ երգատըզ-
տան սօնրա , գանսէրի պիւսպիւթիւն գայիլ
օլմուշ տըր :

Մանստա սաքին օլան 27 եաշնտաքի
Լուիզ Հարտուն , պէշ սէնէտէն պէրի պա-
զըրսագ ֆէլճինէ թութուլմուշ օլուպ եու-
մուրթա վէ սիւտտէն պաշգա պիր շէյ եէյէ-
մէյօր վէ կիւնիւն պէօյիւք պիր գըսմընը ու-
գանմըշ գալարագ կէշիրմէյէ վէ հիշ պիր շէյ
եարամամաղա մահքիւմ պիր հալտէ պուլու-
նուէօր իքէն , Լուրտ հալզընտա երգանտըզ-
տան սօնրա շիֆա պուլմիւշ օլուպ , շիմտի
հիշ պիր աղըր հիսս իթմէմէքտէ տիր :

Շարթըր 43 եաշնտաքի Լուիզ Կէրէն ,
իւշ պուլուգ սէնէտէն պէրի էվրամըլէյֆիյէ-
(fibrome) տիւշար օլուպ էն իսաֆիֆ զըտա-

լարը պիլէ պէօյիւք միւշքիւթլա եէյէպիլի-
յօր իքէն , վէ պուլնտան մատա X շիւլէլէրի
նէթիճէսի օլարագ , իւզէրինտէ աշըլմըշ օլան
եարալարըն գանը վէ ճէրահաթը տուրմայօր
իքէն , թաիօր էսնասընտա պիր էսէրի սա-
լահ հիսս իթմիւշ վէ գան իլէ ճէրահաթ տա-
խի արթըզ տուրմուշ տըր :

(Մապասի վար)

ՕՐՄԱՆԵԱՆԻ ՄԻՋԱԴԵՊԸ

Այս օրերս էջմ . Հայոց եւ իրենց մի քանի
թերթերուն մէջ իրարանցում մը տեղի ունե-
ցաւ , անոր համար որ Գերյ . Հ . Գաբրիէլ
Մէնէվիլեան՝ Օրմանեանի այցելութիւն մը
տուած պահուն , բարեկամական ազդարա-
րութիւն մը ըրեր է իրեն որ այլեւս վե-
րադառնայ իր նախկին հաւատքին , ի ծոց
Հոռվմէական Ուղղափառ Ս . Եկեղեցւոյ :

Լաւ կ'ըլլայ համառօտիւ ճշգրէ խնդրոյն
վիճակը , այս առթիւ ի գործ դրուած անի-
մատ յարձակումներուն սկզբնապատճառին
թափանցելու համար :

Պարզե՞նք Կաթողիկէութեան ճշգրիտ տե-
տութիւնը եւ խնդիրը ինքնին պիտի ստանայ
իր լուծումը :

1. Կաթողիկէն կը հաւատայ որ Քրիստո-
սի հիմնած Եկեղեցին (Մատթ . Ժ2 .) միայն
մէկ է , որ ընդհանրական է եւ ոչ թէ
ազգային : Եւ այս Եկեղեցին , Հոռվմէական
Ուղղափառ Եկեղեցին է , որուն հիմնարկուն
է Ս . Պետրոս Առաքելապետն , որուն վրայ շի-
նեց Քրիստոս իր Եկեղեցին , եւ Սրբազան Քա-
հանայապետները անոր Յաջորդներն են՝ եւ հե-
տեւապէս , Քրիստոսի Փոխանորդներն են :

2. Ամէն մարդ՝ Քրիստոսի աշակերտ ըլ-
լալու համար , պէտք է որ այս միակ Եկեղե-
ցւոյն մէջ գտնուի իբր անոր անդամը , այնպէս
որ այս Եկեղեցին գուրս յաւիտեանական
փրկութիւն չկայ : — Անյաղթելի բարի հա-
ւատքով անարատ ապրողներու համար Աս-
տուծոյ գթութիւնը բնականաբար չի սահմա-
նափակուիր :

3. Հետեւաբար, ով որ՝ կամ ու է խըմբակ որ Քրիստոսի այս միակ Եկեղեցիէն դուրս է կամ անկէ բաժնուած, չի պատկանիր Քրիստոսի, որով և հերձուածող է կամ հերետիկոս կամ անհաւատ կամ անկրօն:

4. Քրիստոսի Աստուծոյ մերոյ բացարձակ հրամանն է Աւետարանը քարոզել ամէն արարածի, (Մարկ. ԺԶ.), մինչև ցկատարած աշխարհի, (Մատթ. ԻԸ.). այսինքն՝ դարձի բերել բոլոր աշխարհքը. ով որ կը հաւատայ, պիտի վերկուի, և ով որ չի հաւատար պիտի դատապարտուի Ի սկզբանէ Ս. Եկեղեցին ամենայն ճշգրտեմամբ կատարեց իր այս քրիստոսատուր պաշտօնը: Առաքեալ: դարձի բերին աշխարհքը՝ ամէն մտքերը գերելով ի հոգանդութիւն Քրիստոսի. անոնց գործը շարունակեցին Ս. Հարք, Վարդապետք, Եկեղեցւոյ պաշտօնեայք, քան զարեւ է ի վեր, ու պիտի շարունակեն մինչև ի կատարած աշխարհի: Այս սրբազան քարոզութիւնը չընդունողները պիտի դատապարտուին:

5. Էջմիածնական յորջորջուած եկեղեցին, որովհետև մեր Ուղղափառ Հարց և Հայրապետաց վարդապետութիւնն իսկ քամահրելով, Քրիստոսի հիմնած Եկեղեցիին պաշտօնապէս հակառակող հանդիսացած է, ըստ հետեւորդի՝ հերձուածող է. և որովհետև Քրիստոսի ճշմարիտ Ուղղափառ Եկեղեցւոյն սորվեցուցած վարդապետութեանց մի քանին կը մերժէ, ուստի և հերետիկոս է. ճշմարիտ որթէն կտրուած, անկենդան ուռ մըն է. լճացեալ ու ապականութեան սահմանուած ջուր է: Եւ անա՛ կը տիրէ իր մէջ սոսկալի անխտրականութեան ոգի, որով և մահացու անտարբերականութիւն մը՝ որ նախակարապետն է անկրօնութեան: Իր նուիրապետներն իսկ, իր հովիւները օր ըստ օրէ՝ կ'ուսուցանեն հաւատոյ մասերու ուրացումը, և չկայ բնաւ իշխանութիւն մը որ կարող ըլլայ խափանել այս աղէտը, էջմ. եկեղեցին կ'երթայ ու կը քայքայի՝ ապականութեան սերմը իր մէջ ունենալով:

6. Տրամաբանական հետեւութիւն մըն է ուրեմն թէ՛՝ ո՛վ որ աշխարհային նկատումներով (զի մտքի համոզումով այդ անկարելի

է բնագոյնապէս) թուու Հոովմէական Ս. Եկեղեցին և զիմէ՝ էջմիածնականութեան, բացարձակապէս կ'ուրանայ Քրիստոսի Սուրբ Հաւատքը: Եւ ուրացողը, եթէ Պետրոսի պէս դաժի չգայ, պիտի դատապարտուի և պիտի երթայ իւր ցեղը՝ Յուդայի պէս (Պործ. Ա.):

7. Ուստի՝ Օրմանեան պարզապէս ուրացող մըն է, ինչ որ ալ եղած ըլլայ՝ աստուածաբան, Եպիսկոպոս, Պատրիարք: Քանզի Օրմանեան Հոովմէական ուղղափառ հաւատքի մէջ ծնած է՝ Կաթողիկէ ընտանիքի մը ծոցին մէջ, կաթողիկէ դատարարակութիւն առած է, Կաթողիկէ կրօնաւոր եղած է, Կաթողիկէ սուրբ գիտութիւնը սորված է, Կաթողիկէ քահանայ ձեռնադրուած է, և իբր այն՝ տարիներով քահանայապետած է: Իսկ վերջը ըմբոստացած ու բանադրուած է, և աւելի վերջը՝ իր ընկերներուն հետ չվերադառնալով ի փարսին Քրիստոսի, աշխարհային փառքի և շահու համար ուղղափառ հաւատքը ուրացած է, Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցիէն ելած է և զիմած՝ էջմ. աղգային եկեղեցին: Փառասիրութիւնը եղած է զխաւորաբար Օրմանեանի սոսկալի ուրացութեան շարժառիթը: Անգամ մը ինքն իսկ յայտարարեց. «Մտածեցի որ Կաթողիկէ եկեղեցին մէջ հազարաւոր հանճարներ կան, ևս պիտի մնայի անշուք. ուստի էջմիածնական եղայ՝ մէկ հատիկ ըլլալու համար» Աստուած այս աշխարհիս վրայ ալ հրապարակաւ և խստիւ պատժեց իր այս կիրքը: Անգղիոյ Եղիսաբեթն ալ կ'ըսէր. «Քառասուն տարի թագաւորութիւն. թո՛ղ վերջը դժոխք ըլլայ»: Ըսող ալ կայ իրենց մէջ թէ՛ Օրմանեան անհաւատ է... ուրիշ տիտղոս մը իր խեղճութեան և արգահատելի վիճակին:

8. Հիմա Օրմանեան մահացու հիւանդութեան մը բռնուած է, քահուան և կենաց մէջ կը տարուբերի. գերեզմանին եղբը կը գտնուի ճշմարիտ Կաթողիկէ մը կը զարհուրի այս մտածումին առջև, Օրմանեանի յաւիտենական դատապարտութիւնը կ'ախում ունի թիւէ մը, կաթիլէ մը... Մեր մօր՝ Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ զաւակ մըն էր որ անդարմանելի կո-

ընտանիքի գահաւանդին եղբոր մօտեցած է...
ահա՛, գլորելու վրայ է... ո՛վ պիտի չի վա-
զէ ազատելու, եթէ հնար է!...

9. Այս փութկոտ, այս եղբայրսիրական
զոհաբեր դիմումը Հ. Գարրիէլի համար փո-
խանակ պատիւ համարելու, ի յանցանա կը
վերագրեն. բայց մը, զոր սիրայօժար և իբր
սրբազան պարտք մը պիտի կատարէր ո և է
պարտաճանաչ և հաւատացեալ Կաթողիկէ
քահանայ կամ նոյն իսկ աշխարհական. — Ու-
րեմն ասոնք լուր չունին Աւետարանի բարի
լուրէն: — Գրիստոս Տէրն՝ մեր սորվեցուց վազել
մոլորեալ ոչխարին ետեւէն (Մատթ. ԺԸ.),
և Օրմանեան մոլորեալ ոչխար մըն է. Գրիս-
տոս սորվեցուց ամէն ճիգով և ճրագով փն-
տուել կորսուած դրամը (Ղուկ. ԺԵ.), եւ
Օրմանեան կորուսած է իր հաւատքի անգին
զանձը. Գրիստոս անդադար դարձ քարոզեց
կեղծաւոր փարիսեցիներու, և Օրմանեան
հպարտութեան ու կեղծիքի արգահատելի
զոհ մըն է: Գրիստոս Տէրը՝ անկող սպառնա-
լիքներով, հրամայեց Եկեղեցւոյ պաշտօնէից,
զորս դէտ կացուցած է, զեկեղեցւոյ մեղա-
ւորին որ դարձի գայ (Եզեկ. Գ.), և Օրմանեան
դարձի կարօտ հրապարակական մեղաւոր մըն
է, որ ուրիշներն ալ մոլորեցուց՝ մանաւանդ իր
չար գրութիւններովը. Գրիստոս, որ ճանա-
պարհ է մոլորելոց և ճառագայթ խաւարելոց,
յրկած է իր ծառաները որ քարոզեն հաւա-
րեն ամէնքն իր կոչունքին՝ ի սուրբ Հաւատոս,
և Օրմանեան խեղճ նօթի մըն է ի հաւատոս.
Գրիստոս հրամայած է իր աշակերտին գրել
զեկեղեցւոյ մոլորած պետերու որ դառնան.
«Յիշեա՛ ուստի անկարն և ապաշաւեա՛»,
և Օրմանեան իր յաւիտենական փրկութեան
համար շատ ու շուտ պէտք ունի ապաշխա-
րանքի. ապա թէ ոչ ահաւոր դատաւորը կու
գայ վաղվադակի ու պիտի պատերազմի իր
բերնին սրովը... (Յայտ. Բ.):

Պէտք է որ պաշտօնեան զեկեղեցւոյն. իսկ
եթէ նա մերժէ, իր յանցանքով կը դատապար-
տուի. «Դուք ոչ հաւատայիք, զի չեք յոյսարաց
անսի իմոց. ոչխարք իմ ձայնի իմում լսեն»:
(Յովհ. Ժ.) Դատապարտութեան յանցանքը
իրենն է. «Կորուստ քո ի քեզ եւ իսրայէլ»:

«Ո՛չ ոք յայնց կոչեցելոց նաեակեցեք յընթեր-
եաց իմոց» (Ղուկ. ԺԴ.). «Բժեկեցաք զբարե-
լոն եւ նա ոչ բժեկեցաւ, քողցուի զնա» (Եր. ՆԱ.)
«Քանից՛ս անգամ կամեցայ ժողովել... եւ ոչ
կամեցարուի. ահա՛ քողեալ լիցի ձեզ տունդ
ձեր աւերակ» (Մատթ. ԻԳ.). Այսպէս կը
դատապարտուի վերջնական անապաշխարը:

Բայց ի՞նչպէս պարտազանց պիտի ըլլայ
Կաթողիկէ պաշտօնեայն որուն չը գոչէ Պօղոս.
«Քարոզեա՛ զբանն, հա՛ս ի վերայ՝ ժամու
եւ տարածաւու»:. որուն պատգամ կու տայ
Յակոբոս. «Եթէ ձեզմէ մէկը ճամսոսութեան
նամբէն մոլորի, ու մէկը զանկալ դարձի բե-
րէ, քո՛ղ գիտնայ, որ մեղաւորը մոլո-
րութեան նամբէն դարձնողը իր հոգին մահ-
ուրնէ պիտի փրկէ»:

Ի՞նչպէս իր մոլորած և դատապարտու-
թեան մօտեցած եղբոր քով պիտի չվազէ
քահանան, որ կը տեսնէ Գրիստոսի օրինակը
որ վերջին վարկեանին իսկ յորդորներ կը՝
կարդայ մատնիչ Յուդայի, որ գորովով կը
նայի ուրացող Պետրոսի, որ կ'աղօթէ խա-
չահանուաց համար, որ դարձի կը բերէ խա-
չակից և մահամերձ աւազակը: Ի՞նչպէս չը
փութայ քահանան երբ իր աշխարհաց կը գո-
չէ փողն Տարսնեան. «Խնդրէի յԱսուծոյ եւ
փոխու եւ մեծաւ, ոչ միայն զեզ, այլ զա-
մենեսեան՝ որ լսեն ինձ այսօր, լինել այս-
պիսի որպէս եւ եսս եմ, բաց ի կապանաց
ասի» (Գործ. ԻԶ.), և որ կ'աղաղակէ. «Այլ
ես մտադիւրութեամբ ծախեցից եւ ծախեցայ
վասն անձանց ձերոց» (Բ. Կոր ԺԲ.). և
թէ՛ «Տրսմութիւն եւ ինձ յոյժ եւ անպակաս
ցաւ սրտի իմոյ, զի ուխտիւ խնդրէի ես իսկ
ինքնին նկով լինել ի Գրիստոս վասն եղբարց
եւ ազգականաց իմոց ըստ մարմնոյ» (Հռ.
Թ.):

Ահա ասոր համար է որ քահանան պարտք
ունի և հաճոյք՝ մահամերձ մեղաւորի մօտ
վազելու, քսան դարերէ ի վեր, ինչպէս Ժո-
ղովրդապետը վազած է Վուլգիոս քով, ինչպէս
Կարդ. Րիչարդ՝ Վիկտոր Հիւկոյի քով, ինչպէս
խոնարհ կրօնաւորը՝ Գալուսի քով: Չկայ
ոյժ մը որ կարող ըլլայ կասեցնել ճշմարիտ
քահանան, որ ոչ թէ մարդոց, այլ Քրիս-

տոսի պիտի հաճոյանայ. «Եթէ մտադկան հա-
նոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի»
կ'ըսէ աներկիւղ Առաքեալը (Գաղ. Ա.):

10. Եւ աւելի կը դարձնեն անոր հա-
մար որ Մխիթարեան կրօնաւոր մըն է եղեր
գացողը: Անունը վրան է, կրօնաւոր ու մը-
խիթարիչ: Ինչ հակասութիւն կայ հոս: Եւ
եթէ իրենք կը կարծեն թէ Մխիթարեանք
կը դրժեն իրենց կրօնական սկզբանց, չա'տ
կը սխալին. կրօնք տարբեր, գիտութիւն
տարբեր: Մինչեւ յետին քահանան, մինչեւ
յետին կրօնաւորը՝ Կաթողիկէութեան մէջ,
հաւատարիմ է իր կրօնական պարտուց. և
եթէ ասոր հակառակ գաղափար տուող ե-
ղած ըլլայ երկիւք, ստած է անշուշտ. և եթէ
այս պարտուց հակառակ գործող եղած է եր-
բեք, ուխտագրութ է անշուշտ: Այլապէս
անհնարին է կաթողիկէ ըլլալ. եւ այս է
ճիշդ՝ նաև Մխիթար Արքայօր սորվեցուցածը,
զոր կը բամբասեն իրենց թերթերը, ու չեն
ամօնար գրելու թէ՛ «Լիեննական Մխիթար-
եանք իրենց գրուածներով յայտնապէս ցոյց
տուած էին երկար ատենէ ի վեր թէ՛ մոռ-
ցած են Մխիթար Արքային նուիրական աւան-
դութիւններն և իրենց վսեմ կոչումը, մար-
դորս բարոյական տի գեր մը կը կատարեն ազ-
գին մէջ»: Մխիթարեանք, Վիեննայի կամ
Վենետիկ, Կաթողիկէ կրօնաւորներ են, եւ
Քրիստոսի հրամանն ունին: Զմարդիկ որսայ-
ցես ի կեանս. և կեանքը միակ ուղղափառ
եկեղեցւոյ մէջ է, որ Քրիստոսին է, և Քրիս-
տոս է կեանքը. և ճիշդ՝ ասոնք են նաեւ
մխիթար Արքայօր նուիրական աւանդու-
թիւնները, որ Հռովմէական սուրբ հա-
ւատքը քարոզեց և էջ. Իրաճանկաներէն հա-
լածուեցաւ և հիմնեց Կարողիկէ կրօնաւորա-
կան կարգ մը: — Բաջ հասկնան Մխիթար-
եանք թէ որպիսի յետին եւ վատ մտքով կը
սիրեն (?) եղեր գիրենք էջմիածնականք:

11. Սակայն այսչափ անտրամաբան յար-
ձակումներու շարժառիթը այլազան է: Նախ
կայ sqisութիւնը՝ ռամկին մեծագոյն մասին
կողմանէ որ կողմիտ ձեւ մը կ'առնու և կը
յարուցանէ կաթողիկէութեան դէմ կանխա-
կալ կարծեաց անմիտ ու անբարասան ժխոր

մը, զոր՝ մինչեւ ցծայրայեղութիւն կը հրա-
հրէ փարիսական քէնը, մանաւանդ անպար-
տաճանաչ եկեղեցականութիւնը, իբրեւ թէ,
ուղեւոր վրէժ լուծել ժողովրդային կիրքերու
շղթայազերծ փոթորկումով: Այսպէս հալա-
ծած էին տարիներով կաթողիկէ հայերը՝ ա-
նողոքելի խժգոնութիւններով. մերթ ընդ
մերթ կը զարթնու իրենց անզուսպ զայրոյ-
թը կաթողիկէ ճշմարտութեան դէմ, քանզի
իրենք բոլորովին անհոգ ըլլալով հոգւոյ փըր-
կութեան, բարի օրինակը կը զայրացնէ զի-
րենք, իբր հայելի ցոլացնելով իրենց տգի-
տութիւնը: Հրեայք ալ զՔրիստոս կ'ուզէին
սպաննել որովհետեւ ճշմարտութիւնը կը խօ-
սէր: Վերջը կու գայ անցարբերներու անա-
գին թիւը, որոնք կ'ուզեն անխտրական ըլ-
լալ, ազգը կը գերադասեն կրօնքի, զոր կը
ձեւեն իւրաքանչիւր ըստ քմաց, յապաւե-
լով ու կտրատելով. և հակառակ իրենց իսկ
նշանարանին, աններող են Կաթողիկէու-
թեան դէմ, որ իբր ժայռ անասանելի պա-
հապան է Քրիստոսի յայտնութեանց, թէեւ
զարմանք ալ յայտնեն այս աննկուն կորովին
վրայ: Վերջապէս կան անկրօններ, բազմա-
թիւ, որոնք կ'ուրանան ամէն սրբութիւն,
կը ծաղրեն ստորնաքարչ հեգնութիւններով,
ինչպէս կ'ընէր Վոլթէն, ու բնականաբար
անհաշտ թշնամիներ են Կաթողիկէութեան
որ վեհօրէն կը հաստատէ զԱստուած, զՔրիս-
տոս, զՍ. Եկեղեցի՝ միակ և անսխալ, ու կը
մատնանչէ յաւիտենական վարձք կամ պա-
տիժ: Այդ անկրօններն են առհասարակ ո-
րոնք՝ զարմանալի հակասութեամբ, պաշտ-
պան կը կանգնին իրենց եկեղեցւոյն մոլո-
րութեանց. մին եպիսկոպոս կամ վարդա-
պետ, կ'ուրանայ Ս. Խաչը, Աստուածածնի
առանձնաշնորհումները ևն. միւսը, երիտա-
սարդ խմբագիր, առասպել կ'անուանէ ար-
քայութիւնն ու դժոխքը. երրորդ մը, ծաղ-
կեալ բայց ծաղրածու գրիչ, Քրիստոնէու-
թեան կործանումը կ'աւետէ անվրդով, և
ո՛ր է ուսեալի մը անպատճառ անհա-
ւատ ըլլալը կը հաստատէ անամօթա-
բար. առանց գիտնալու թէ եկեղեցւոյ հիմ-
նադիրը Աստուած ինքն է. և այդ ժայռը

դեռ ուրիշ փոթորիկներ վանած է խորխորտ, և ծաղրածուն Վրլթէն որ նոյնպիսի բուռի չարագուշակութիւններ բրած էր, փճացաւ և երկու դար վերջը աւելի քան երբեք կը ծաղկի Կաթողիկէութիւնը:

Ահաւասիկ այն տարրերը որոնք կը կազմեն և որոնք պիտի կազմաւորեն էջմիածնական եկեղեցին, մօտալուռ ու սպառնալից ապագայի մը մէջ:

Իսկ Կաթողիկէ եկեղեցին պիտի քալէ միշտ պերճ, միշտ անասան, միշտ յաղթական, մինչեւ ցկատարած աշխարհի. զի Քրիստոս ինքը ըսաւ. — «Իջին անձեւեւ, եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին զօղակն, եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր» (Մատթ. Է.):

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

- Հոկտեմբեր 12 † Կիր. թվ. Ե. գկնի խաչին
- 13 Բշ. գժ. Գիւս հեխարաց Ս. Գրիգորիոսի՝ Աղուանից Կարողիկոսի եւ Ս. Հարցն թաքիյի, Վարոսի, Թովմասու, Անտոնի եւ Կրօնիդեայ եւ Եօթն խոսանաւապացն:
- 14 Դշ. գկ. Գանիա Առաքելոյն եւ Ժ.Յ. վարդապետացն եւ Ս. Առաքելոցն՝ Մասաթիայ, Իառնաբայ, Փիլիպպոսի, Յովնանու, Շիղայի եւ Սիւռնանոսի:
- 15 Դշ. դժ. Պառոց:
- 16 Եշ. դկ. Դիմնիսիոսի Արիսպագացւոյն եւ Տիմոթէոսի եւ Տիսոսի եւ այլոց առաքելացն Պողոսի:
- 17 Ուրբ. աժ. Պառոց:
- 18 Շք. ալ. Ս. Աւետարանչացն: Եւ Ղուկիանոսի Բանանային եւ Ս. Վկայիցն Տաւադոսի, Դեռքոսի, Գրեգորիոսի եւ Պեղագեայ Կուսին:

Ս. ԽԱՉԻՆ ՏՕՆԵՐԸ

Ա. Խաչվերաց

Եկեղեցին Ս. Խաչին տօները սահմանած է, որպէս զի անոր շուրջը տառն տառն տեղի ունեցող հրաշալի և ուրախութիւն գէպքերուն յիշատակը յաւերժացնէ և խաչեալ Յիսուսի մեղի նկատմամբ ունեցած անհուն սիրոյն նշանը ցոյց տալով՝ զմեզ սիրով բորբոքէ և կեանքի պայքարը անձնանուէր տրիւթիւն ետմը մղելու խրախուսէ:

Խաչվերացը, որ մեծ խաչ ալ կ'ըսուի, մեծահոգեւոր կը տօնախմբենք սեպտեմբեր 14ի մերձաւորը Կիրակին: Լատինները նոյն օրը կը յիշատակեն Ս. Խաչին Պարսից ձեռքէն ետ առնուելը: 623ին Սարգիս Պարսից թագաւորը՝ տիրեց Երուսաղէմի և Պարսկաստան տարաւ Կենաց Փայտը որ արծաթէ տուփի մը մէջ ամփոփուած Ս. Հեղինէի կողմէ Գողգոթայի վրայ շինուած եկեղեցւոյն մէջ կը պահուէր: 11 տարի վերջը Հերակղէս կայսրը Պարսից յաղթեց և ետ առաւ Ս. Խաչը, և յաղթանակաւ տարաւ Պոլիս և սպառնալով, որ Զաքարիա Պատրիարքը նախ ստուգէր որ Պարսից թագաւորները յորդած էին անոր կնիքը, սպառնալով բացաւ տուփը, երկրպագեց Կենաց Փայտին և զայն բորձբացնելով օրհնեց ժողովուրդը: Այս առթիւ շատ հրաշալի բժշկութիւններ եղան:

Իսկ Յոյները առանց այս դէպքը մէջտեղ բերելու, նոյն օրը երկարօրէն կը յիշեն այն հրաշատեսիլ խաչը որ Միհին Կոստանդինուսի երեւցաւ օրին մէջ, Այսու յաղթեալ՝ տաղաւառ բաւեցով, երբ ան Մարտինիոս բռնաւորին վրայ կ'արշաւէր, կը յիշեն նոյնպէս թէ Ս. Հեղինէ Երուսաղէմ երթալով, Քրիստոսի գերեզմանին վրայ շինուած Աստղիկի տաճարը քանդել տուաւ, և յետոյ հոն պեղումներ ընելով գտաւ երեք նման խաչեր, Փրկչին խաչին վերնագրով և գամերուն հետ (326): Ճշմարիտ խաչը հրաշքով ճանչցուեցաւ: Ս. Հեղինէ անոր մէկ — կտորը Պոլիս զրկեց, մնացածը ամփոփուեցաւ արծաթէ տուփի մը մէջ և պահուեցաւ Ս. Գերեզմանի եկեղեցւոյն մէջ որ նոյն տեղը կառուցուեցաւ 335ին: Ս. Խաչին գտնուելէն վերջը Մակար հայրապետը բեմ ելաւ, օրհնեց ժողովուրդը խաչը չէր բարձրացնելով. տակէ յառաջ եկած է Խաչվերաց յորհորջումը:

Մեր Յայրմաւաւրքը, առանց յիշելու Կոստանդինուսի տեսիլքը, կը նշանակէ միայն Ս. Հեղինէի ձեռքով Ս. Խաչին գտնուելը:

Այս ամէնէն յայտնի է թէ Խաչվերացի տօնին հաստատութեան գլխաւոր և բուն պատճառն է Կոստանդինուսի տեսիլքը, որ տեղի ունեցաւ 342ին սեպտեմբեր ամսուն մէջ, և որմէ յետոյ նոյն կայսեր դարձովը բարձրացաւ մինչեւ այն աստիճան, որ Կոստանդինուս խորք ծածկուած Ս. Նշանը, քաղեց իբրեւ յաղթապանի զբօշակ բանակներու առջեւէն, քանդակուեցաւ թագերու և սաղաւարտներու վրայ և ընկճելով իր բազմադարեան թշնամին հեթանոսութիւնը, իշխեց ամէն կողմ բարձրագոյնաւ:

Այս գլխաւոր պատճառին վրայ աւելցած են ապա Խաչին գտնուելուն և Հերակղէսի օրով Պարսից ձեռքէն ետ առնուելուն պարագաները:

Լիբանանի բարեպաշտ ժողովուրդը արտաքայ կարգի հանգիստը ուրութեամբ կը կատարէ այս տօնը՝ վաղեմի ժամանակներէ ի վեր: Խաչվերացի նախնիքն ալ իրիկունը բիւրուար լլպսեր կը վառեն ամէն բարձունքներու

վրայ՝ թիւով և պայծառութեամբ մըցելով երկնից
աստղերուն հետ: Սիդնէն մինչեւ Թրիփոլի, ամէն
կաթողիկէ խանդավառութեամբ մէջ է: Քոյսը զան-
գակները կը միացնեն իրենց ձայները հաւատացելոց
երգերուն, ալիքներու միմուռներուն, և նոյն իրիկուն
ամիսը հսկեցունց արտայայտութիւններուն՝ փրկու-
թեան պտուղը տուող կենաց Փայտը փառաւորելու
համար:

ՀՈԳԵԻՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝՝ ԳՐՔԷՆ

Գրիգ. Ա. — Գլ. Ժ. — Յանգուզն դասուով խորհելու վրայ:
Ինկնիրենդ վրայ դարձուր սղուրներդ, և ուրիշ-
ներուն գործերը դասէրկ զգուշացիր:

Ուրիշները դասելով՝ մարդ ի զուր կը վաստակի.
յաճախագոյն կը սխալի ու դիւրաւ կը մեղակնի. իսկ
ինկնիրենդ դասելով ու ինկնով, միշտ արդիւնաւորապէս
աշխատած կ'ըլլայ:

Մեր արհիւ փափաքածին համաժայն յաճախ կը
դասենք՝ բան մը. որովհետեւ առանձնական սիրոյ պատ-
ճառաւ մըմարիս դասասանը դիւրաւ կը կորսնցնենք:

Երե մեր բաղնանքին մասուր դիտաւորութիւնն ու
նպատակն մասուած ըլլար, ոչ այնչափ դիւրաւ պիտի
խառնէինք մեր զգացումին դիտաւորութիւն համար:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ (*)

(Շար.)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱՄ

Ա. ՏԵՍՍԱՐԱՆ

Համան, Հիդասպ

Համան

Այգուն այգուն երբ հազիւ հազ լոյսն ըսկսեր է բացուիլ,
Ձիս այս վայրն ահաւոր կը յանդգնէ՞ս մոցընել:

Հիդասպ

Կրնաք անկասկած վստահ ըլլալ իմ վրաս:
Գիտէք որ այս բոլոր դռներն իմ հրամանիս ներքե են.
Եկէ՛ք: Ուրիշ ամէն ուրիշ կրնան լսել խօսքերնիս:

Համան

Արդեօք ի՞նչ կարեւոր գաղտնիք կ'ուզես ինձ յայտնել:

Հիդասպ

Տէ՛ր, ձեր անհուն բարիքներով հազար անգամ պատուուած,
Միշտ կը յիշեմ որ ես ձեզի խոտապեր եմ երդումով,
Ձեր առջև բանալ, պարզի՛լ խորհուրդներով անկեղծիկ,
Ամէն ծածկագոյն գալափքերն այս պայտին:
Արքան համակուած կ'երևի խոր թախիծով.
Այս գիշեր խելայեղեր է զինք երազ մ'անընկէց:
Երբ խաղաղ լուծեան մէջ ամենայն ինչ կը հանգչէր,
Յանկարծ ճիշ մը սրսկալի լուսեցաւ իր սենեակէն:

Վազեցի . խառնաշրթոթ խօսքեր բերնէն կը հանէր ,
Իրեն մահ սպառնացող վտանգի մը դէմ կը գոռար .
Առեւանգիչ և վայրենի . թշնամեաց վրայ խօսք կ'ընէր .
Եսթերին անուէն անգամ , Տէ'ր իմ , ելաւ իր բերնէն :
Այս արհաւիրքով գիշերն ի բուն տանջուեցաւ .
Վերջապէս փախստեայ նինջը կանչելէն պարտասած ,
Այն ահընկէց արհաւիրքներն հեռացնելու դիտումով
Հրամայեց որ բերեն իր տարեգիրներն անուանի ,
Ուր դէպքերն իր արքայութեան մեծ խնամով ամփոփուած
Օրը օրին դրոշմուած են հաւատարիմ ձեռքերէ .
Ծառայութիւն ու թշնամանք այն տեղ գրուած կը պահուին ,
Սիրոյ վրէժին դրութեան յուշակերտներ անկորուստ :
Արքան , զոր մահճին մէջ թողուցի քիչ մ' հանդարտած ,
Այս պատմութեան միտ կը դնէ ծայրաստիճան լրջութեամբ :

Համան

Իր ո՞ր՝ ժամանակուան պատմագրութիւնն ընտրած է :

Հիդասպ

Իր փառքով ու յաղթութեամբ ճոխ ժամանակը բոլոր ,
Նշանաւոր օրէն ի վեր ուր Կիւրոսի գահին վրայ
Բախտն ընտրեց և բարձրացուց բարեբաւտիկն Արտաշէս :

Համան

Ուստի , Տէ'ր Նախարար , այդ երազն ելած է մտքէն :

Հիդասպ

Բոլոր քաղաքացի գուշակներէն անուանի
Հաւաքած է քովը զսնոնք որ տեղեակ են հանելու
Խառնաշրթոթ երազներէ որոշումներն երկինքի . . . :
Բայց ի՞նչ խռովութիւն տալն ու վրայ կ'ընէ զքեզ :
Երբ ինծի մտիկ կ'ընես , հոգեյուզուած կ'երեւիս .
Համանն երջանիկ արդեօք ունի՞ թաքուն ցաւ :

Համան

Կրնա՞ս ինծի հարցընել զայդ հոս ուր հիմայ կը գտնուինք :
Ատուած , ահարկո՛ւ , և նախանձի նշաւակ .
Բոլոր թշուառ հպատակներէս տարաբախտ եմ տարաբախտ :

Հիդասպ

Էհ , քեզմէ աւելի Երկինք որո՞ւ ժպտեր է .
Տիեզերքը կը տեսնես առջևդ ինկած գլխիկոր :

Համան

Ո՛հ , տիեզէ՛րք , Մարդ մը միշտ . . . գերի մը վատ ամէն օր ,
Կ'արհամարհէ և կ'անարգէ զիս անտմօթ լրբո՞թեամբ :

Հիդասպ

Ո՛վ է այդ Պետութեան և Արքային թշնամին:

Համան

Մուրթէին անունն արդեօք լսե՞ր ես:

Հիդասպ

Որո՞ւն, գարշելի՛ վատ թա՛ր ցեղի մը Պետին:

Համան

Այո՛, անոր:

Հիդասպ

Տէ՛ր իմ, անդորրութիւնն այդքան չքնաղ մի կեանքի
Այդպիսի տկար ոտին ի՞նչպէս կրնայ վրդովել:

Համան

Այն լիրբն ամենեւին ինծի գլուխ չը ծռեց.
Ի զո՛ւր ամենամեծ ինքնակալին շնորհին
Նշաններն ամէն ոք կը մեծարէ ծնրագիր:
Երբ Պարսիկները բովանդակ սուրր յարգանքով գրաւուած
Վերցրնել չեն համարձակիր գետին պամուած գլուխներն,
Ինք նստած գոռոզաբար, գլուխն անշարժ վեր տնկած,
Այդ պատիւներն կը համարի ծառայութիւն ամբարիշտ:
Ճակատը սէգ, ամբարտաւան՝ աչքիս դիմաց կը ցըցէ,
Երբէք չի՛ զիջանիր աչքերն իսկ վա՛ր առնելու:
Եւ սակայն պալատին դրան առջեւ կը կենայ,
Եւ ամ,ն անդամ, Հիդասպ, որ ներս մտնում, դուրս ելլում,
Ժանտ զէմքը զիս կը վշտագնէ, ինծի կ'ըլլայ հետամուտ,
Ոռովայոյզ մտքիս առջեւ գիշեր ասուն իսկ կու գայ:
Տեսայ զինք ծածկըւած զարհուրելի փոշիով
Քուրձ հագած և դալկահար, սակայն աչքերն տակաւին
Մոխրին տակն ալ դեռ պտնէր էին խիզախ նայուածքնին:
Ի՞նչ է պատճառն այդ անամօթ յանդգնութեան, բարեկամ,
Դուն որ հոս կը տեսնես քաջ ինչ որ կանցնի, կը դառնայ,
Կրնա՞ս կարծել որ մէկ մը զինք պաշտպանելու յանդգնի:
Արդեօք ո՞ր դիւրաջախջախ եղեղին է կըռթընած:

Հիդասպ

Տէ՛ր իմ, ծանօթ է քեզ որ իր խորհուրդը լուրջ, փրկաւէտ
Յայտնեց Դարեհի ճաւադրութիւնն արիւնոռչտ:
Արքան խոստադաւ այն ատեն զինք վարձատրել,
Արքան այնուհետեւ կարծես մոռցաւ զինք խապառ:

(Շարունակելի)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Վսեմաշուք Ալեքսանդր Կարգինային նախագահու-
թեամբ Մարինայի մէջ տեղի ունեցաւ կաթողիկէնե-
րու համաժողովրդ։ Կառավարութիւնը հարկ եղած
ամենախիստ միջոցները կանխաւ ձեռք առաւ որպէս
զիչ չըլլայ թէ հակակրօնականներու կողմէ անախորժ
ցոյցեր պատահին։ Այսպէս լինի շուրջ, Բասթէլլի
Ռոմանիի բոլոր գիւղերը պայտուցեցան զինուորներու
կողմէ։ Վսեմ։ Կարգինայ Ալեքսանդր որ Հռոմէն Մա-
րինո կ'երթար 50 ձիաւոր զինուորներու ուղեկցու-
թիւնը վայելեց կառավարութեան որոշմամբ։ Հակա-
կրօնականներու ամէն հաւաքոյթ ուղիւն իւրացաւ։
Այս կարգադրութեանց շնորհիւ համաժողովը փառա-
ւորապէս գումարուեցաւ և անոր 10-15000 անդամ-
ները թափար կապմելով պատշաճ կատարեցին Մարինայի
մէջ։

Ն. Վ. Մէրի տէր Վալ Կարգինայը, Գիտե-
ալ նամակը ուղղած է Մարինայի կաթողիկոս Կարգին-
էն Կարգինային, անոր քահանայական տգումանգեայ
յորեկեանին առ թիւ։

«Վսեմափառ Տէր,

Ձեր թանկագին կենաց ութ աւելցնողները տա-
րին՝ մարմնոյ մտքի և սրտի ուսուցչութեամբ և կո-
րովով թեւակոխած ատեննիդ հաճեցաք Յիսուսի
Քրիստոսի Փոխանորդին ընծայել նոր հաւատարմք ճը-
պատակութեան ձեր անքան երկար և համակ Աս-
տուծոյ ծառայութեան և հոգեւոր փրկութեան նուիր-
ուած և Ս. Գահանայի նկատմամբ եւ անորոնց սիրով և
որդիական հաղանդով խառն տողոյս տոմ ընթացքին
Մայրագոյն Քահանայապետը մեծապէս շահագործա-
ուեցաւ ի լուր այն պատմական միջոցներուն որոնցմով
Աստուածոյն բարութիւնը հասցնցիւ է զձեզ առ-
նելու ի մօտոյ ձեր քահանայութեան տգումանգեայ
յորեկեանը։ Ն. Սրբութիւնը այս արժանացոյց թուա-

կանին հանդիսաւոր կրկին սերտ յիշատակութիւն-
ներուն մասնակցիլ ուղղելով՝ բոլոր սրտանց կը շնորհէ
Ձեր Վսեմափառ Տէրութեան՝ ինչ որ Իրմէ կը խն-
դէք երկու արարողութեանց համար այլ (Խախա-
տար ներողութիւն և Առաքելական Օրհնութիւն ձեր
Վսեմափառ Տէրութեան և ձեր ամբողջ ժողովուրդին
համար)։

Հաճեցէ՛ք Վսեմափառ Տէր, ընդունիլ անկեղծ
շնորհաւորութիւններու և ջերմաջերմ իղձերու և հա-
ւաստիքը որով պատեալ ունիմ ըլլալու։

Ձեր անձնանուէր ծառան
Ռ. Կարգ. Մէրի Տէր Վալ։

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ամենապատեալ Հոգեւոր Տէրը յատուկ շնորհե-
րակոմով բոլոր Զմեռեան Միաբաններուն ծանոյց
Միաբանութեան Կանոնագրին Ս. Գահանայի կողմէ պաշ-
տօնապէս հաստատուելը։ Այս ցանկալի աւետիսը
մեծ ուրախութիւն և խանդավառութիւն պատճա-
ռեր է Մայր Վանքը և գաւառները գտնուող Վար-
դապետներուն և Եպիսկոպոսներուն, ինչպէս կը տես-
նուի հետոյ հետէ ամէն կողմէ եկած նամակներէն։

Ի մօտոյ Կանոնագիրը ստուերով ամէն Միաբանի
պիտի զրկուի, և անոր սահմանադրութեանց համե-
մատ նոր պաշտօնեաներու ընտրութեանց պիտի ձեռ-
նարկուի։

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Օտմանեան կառավարութեան և Պուլկարիոյ մի-
ջեւ կնքուած գաղութագրով՝ պալատեան թերակոյն
չկրցաւ գտնել բողոքացուած խաղաղութիւնը։ Թուր-
քիոյ և Յունաստանի յարաբերութիւնները յուզում-
նայեց և մտահոգիչ կերպարանք մը կ'առնուէր։ Միւս
կողմէ Սերպիոյ և Ալբանացիք արեւելու խժոժու-
թիւններով զիջար կը փազտուէր։ Հելլեն կառավարու-
թիւնը զինուորական մեծամեծ պատրաստութիւններ
կը տեսնէ։ արձակուած պահեստները դարձեալ զէն-
քի տակ կը կոչէ։ Յունաստանի մէջ կը վախճուի որ
Օսմ բանակը արեւմտեան թրակիոյ կողմէն Սելանիկի
վրայ պիտի քալէ։

Քրոջ կը շնչի թէ Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ
համաձայնութիւն կնքուած է ընդդէմ Յունաստանի։

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	641
Լուրս Աստուածածինին եկնի միւնիստրար	646
Օրմանեանի միջադէպը	648
Եօթնեակ Քրիստոսէի	652
Եսթեր	653
Տեղեկագրական	656

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ



ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Նաքարաբերդի Բնաւ. Պատմական քու ծ. Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի Նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները:

Գիւն 5 դահեկան, էջ 144 ամուր քղրակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Դիսատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գընողներու, գոհացուցիչ զեղչ:

ԿԸ ԾԱՌՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գիւն, ամուր Թղթակազմը 2 գհկն:

